Արձանագրություն թիվ 2

2023թ հունվարի 17 - ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 4-րդ ^ա^ դասարանի հերթական ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները:

Ժողովին մասնակցում էր տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Առաջին կիսամյակի ամփոփում:
2. Առջևում ավարտական քննություններն են:
3. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին - Առաջին կիսամյակի ամփոփման հարցը:

Դասղեկ Հ. Մարգսյանը ծնողներին ներկայացրեց առաջին կիսամյակի ամփոփման արդյունքները: Նա ասաց, որ դասարանը ցուցաբերել է 100% առաջադիմություն և օրինակելի վարք: Սակայն քիչ են գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտները: Դասարանում կան 2 գերազանցիկ և 9 հարվածային աշակերտներ: Դասարանի գերազանցիկներն են՝

Անտոնյան Էլինա

Խաչատրյան Վահե

Հարվածայիններ են՝

1.Աբրահամյան Մարի
2.Թևոսյան Մարիա
3.Դավթյան Արփի
4.Դավթյան Մարգարիտա
5.Դավթյան Մարիամ
6.Ծառուկյան Ալեքս
7.Պետրոսյան Մարիանա
8.Հարությունյան Սուսաննա
9.Հովհաննիսյան Ինգա

Որոշեցին. - Լինել ավելի հետևողական և ուշադիր:

2.Լսեցին.- Առջևում ավարտական քննություններն են հարցը:

Մարգսյանը տեղեկացրեց, որ աշակերտների գիտելիքները ստուգելու համար դպրոցի տնօրենության կողմից տրվելու են թեմատիկ գրավոր աշխատանքներ <<Մայրենի>> և <<Մաթեմատիկա>> առարկաներից: Խնդրում է , որ ծնողները լինեն հետևողական, որպեսզի երեխաները գրանցեն լավագույն արդյունքներ: Իսկ հունիսի առջին շաբաթվա ընթացքում երեխաները հանձնելու են ստուգարք <<Մայրենի>> և <<Մաթեմատիկա>> առարկաներից:

Որոշեցին- Ծնողները հավանություն տվեցին և որոշեցին օգնել դասղեկին քննական
շրջանը ավարտելու և լավ արդյունք ապահովելու հարցում:

3.Լսեցին.- Ընթացիկ հարցեր :

Հ. Սարգսյանն ասաց, որ փետրվարի 21-ին կազմակերպելու է միջոցառում նվիրված Մայրենիի օրվան: Քանի որ փետրվարի 19-ին էլ նշվում է <<Գիրք նվիրելու օրը>>, նրանք կհամատեղեն այդ երկու տոները: Իսկ մարտ կամ ապրիլ ամիսներին կկազմակերպվի էքսկուրսիա դեպի Երևան: Երեխաները կայցելեն թատրոն՝ դիտելու <<Անահիտ>> հեքիաթը և Մատենադարան:Իսկ մինչ այդ ուսուցչուհին կստանա տնօրենի համաձայնությունը:

Որոշեցին. -Միշտ լինել դպրոցի և դասարանի կողքին: Օգնել ուսուցչին և աջակցել: Հ. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ծնողներին և մաղթեց երեխաներին առողջություն և հաջողություն:

Ժողովի նախագահ՝ Հ.Մովսիսյան
Ժողովի քարտուղար՝ Ան.Հայրապետյան